

Վրաց տարեգրության մեջ հիշատակված Պերոզավր Սյունեցի իշխանի ինքնության հարցի շուրջ

Պատմագետի պարտքի զգացումն է պահանջում դարերի խորքից, եթե աննշան իսկ հնարավորություն կա, ի դերև հանել հայ իշխանի անուն, կերպար, եթե նա արժանի է դրան իր հայրենանվեր նշանակալի գործերով ու դերակատարումով: Տեղեկանալով IV դարի սկզբներին նման մի հայ իշխանի գործերի՝ Ղ. Ալիշանն ավստում է, որ պատմիչները չեն հիշատակել և մեզ չեն ավանդել այդ իշխանի անունը. «Ձիղջ է զի ոչ յիշեն պատմիչք մեր զանուն այսքանայ քաջի և մեծահավատ նախարարի»:¹ Խոսքը Սյունյաց մի նշանավոր իշխանի մասին է:

Ազաթանգեղոսը տարբեր առիթներով հիշատակություն ունի Սյունյաց իշխանի մասին: Այդ իշխանը եղել է Գր. Լուսավորիչին քահանայապետ օծելու նպատակով Կեսարիա (Մաժաք) ուղեկցող հայ նախարարների շքախմբում:² Սյունյաց երկրի տերը նաև այն քչաթիվ իշխանների հետ էր, որոնք Տրդատ Մեծ Արշակունի արքայի և Գր. Լուսավորիչի հետ մեկնեցին Հռոմ՝ Կոնստանտին կայսեր ի տեսություն:³

Փոքր ինչ կասկած չկա. Ազաթանգեղոսի նշած Սյունյաց նույն իշխանի մասին է մանրամասներ հաղորդում նաև Ջենոբ Գլակը՝ խոսելով Հայաստանում քրիստոնեության տարածման պետական ձեռնարկումների մասին, նշում Սյունյաց իշխանի քրիստոսանվեր ու քաջակորով դերակատարությունը: Ջ. Գլակը ևս նրա անունը չի հիշատակում: Տարոնում հեթանոսների առաջնորդ Արձանի դեմ մղվող կռիվներում այդ իշխանն էր ղեկավարում արքունական զորքը՝ ուղեկից ունենալով ռազմական գործողություններին ականատես Գր. Լուսավորիչին: Սյունյաց իշխանն աչքի ընկավ և անձնական քաջությամբ՝ մենամարտում հաղթելով ու գլխատելով Հաշտենի Խորճես անունով ռազմիկ իշխանին, որը կռվի վճռական պահին դավաճանելով ու հուսահատ դրության մեջ գցելով քրիստոնյաներին, իր 700 զինվորներով անցել էր հեթանոսների կողմը:⁴ Նույն իշխանը աչքի է ընկել նաև Տրդատ Մեծի՝ կրկին Տարոնում, հյուսիսի լեռնականների հայոց աշխարհը ասպատակող բազմաբյուր գործի նկատմամբ հաղթանակ կռելու գործում:⁵

Սյունյաց նույն իշխանի գործերի մասին հիշատակել է նաև Ստ. Օրբելյանը:⁶ Պատմիչը, նրան կոչելով «մեծ», գրում է. «Եվ բազում գանձերով ու ջանքերով մասնակից է դառնում սուրբ Կարապետի հանգստարանի կառուցմանը. այնտեղ, Գլակա վանքում իր հիշատակի համար կոթող է կանգնեցնում քրիստոնեական խաչը»:⁷ Սյունյաց իշխանը՝ արքունական հրամանի համաձայն Գր. Լուսավորիչից վարդապետներ և ուսուցիչներ խնդրելով ու ստանալով մեկնում է իր աշխարհը՝ լուսավորություն տարածելու և նոր հավատը հաստատելու համար: Լսենք Ստ. Օրբելյանին. «Ապա Սյունյաց իշխանը մեծ ուրախությամբ անցավ, եկավ իր աշխարհը, բոլոր յուրայիններին ավագանում մկրտեց լուսավորությամբ և կործանեց կուռքերի բոլոր բազինները ու իր ամբողջ աշխարհը քրիստոնյա դարձրեց, բազինների տեղերն էլ հատկացրեց եկեղեցիների ու աղոթատների շինությանը»:⁸

Որոշ ժամանակ անց Սյունյաց իշխանն իր հայրենի կալվածքում «թանկարժեք ընծաներով ու արքունական պարգևներով պատվում» է Սյունիք այցելած Գր. Լուսավորիչին:⁹ Այո, Սյունյաց իշխանն աչքի է ընկել նշանակալի գործերով և դրա համար է Ալիշանն ափսոսում, որ հայ պատմիչները չեն պահպանել այդ համբավավոր իշխանի անունը: Այնուամենայնիվ, Ալիշանն մի վրացական տարեգրության մեջ (նա նշում է աղբյուրը՝ «ըստ Ջուանշեթի Վրաց պատմութեան»), որը վերաբերում է 332թ. դեպքերին, հանդիպել է Պելուժավր Սյունեցի անվանը և կարծիք հայտնել, թե դա կարող է նույն հռչակավոր իշխանը լինել, թեպետ տարակուսում է անվան «օտարախորթ» հնչյան առթիվ և այն իրավացիորեն համարում «խանգարեալ»:¹⁰ Բայց նա չի փորձում ստուգաբանել ու ճշգրտել իշխանի անունը:

Սյունեցի իշխանի անունը վրաց տարեգրությունների մեջ հիշատակվում է երկու անգամ: IX դարի վրաց Անանուն տարեգիրը իր «Վրաց դարձի պատմության» մեջ գրում է. «Ապա Սալոմե Ուջարմոյեցին և Պերոժավր Սյունեցին բերին թանաք և գրիչներ, և Նունեն սկսեց պատմել, իսկ նրանք գրում էին»:¹¹ Սյունյաց նույն իշխանին, նույն առիթով, հիշատակում է նաև XI դարում ապրած Լեոնտի Ռուխեցին (Լեոնտի Սրովելի)՝ իր հայտնի «Վրաց թագավորությունների և նախահայրերի ու տոհմերի պատմության» մեջ: Նա գրում է. «...Ապա Սալոմե Ուջարմեցին ու Պերոժավր Սյունեցին վերցրին գրիչները [գրելու Նինայի խոսքերը]...»:¹² Անտարակույս, վրաց տարեգիրների կողմից իսկ ճշտվում է Սյունյաց իշխանի անունը՝ Պերոժավր կամ ավելի ճշգրիտ՝ Պերոզավր Սյունեցի:¹³

Այսպես ուրեմն՝ Սյունյաց Պերոզավր իշխանի անունը վրաց տարեգրության մեջ հիշատակվում է վրաց եկեղեցու հիմնադիր Սբ. Նինայի (Նունե) մահվան առիթով: Ալիշանը, ինչպես արդեն նշեցինք, ընդունում է, որ դա տեղի է ունեցել 332թ.: Ներկայումս տիրապետող է այն կարծիքը, որ Սբ. Նինան մահացել է 340թ.:¹⁴ Եթե նույնիսկ միայն այս վերջին թվականը համարենք ստույգ, ապա անհավանական չէ Ալիշանի ենթադրությունը,

որ դարասկզբին Հայաստանում քրիստոնեության տարածման գործում նշանակալի դերակատարություն ստանձնած, այն ժամանակ դեռ տակավին երիտասարդ Սյունյաց նույն իշխանը կարող էր IV դարի 30-ական թվականներին հայտնվել Վրաստանում: Մահվան մահճում Սբ. Նինայի վերջին խոսքերը գրի առնելու համար Հայաստանից Վրաստան պիտի գործուղվել անչափ հեղինակավոր, **պատկառելի** ու նաև գրագետ մի անձնավորություն...: Անտարակույս, Սյունյաց Պերոզավր իշխանը վրացերեն չէ, որ պիտի գրի առներ Սբ. Նինայի խոսքերը: Ուրեմն Սբ. Նինան հայերեն պիտի խոսեր, պատմեր իր պատմությունը և դա նախապես հայոցն էր բոլորին: Սյունյաց իշխանի հետ, ըստ վրաց պատմիչների, գրիչ առավ և Սբ. Նինայի վերջին խոսքերը գրի առնելու պատրաստվեց նաև Սալոմե Ուջարմոյեցի վրաց թագուհին, որը նույնպես հայուհի էր:¹⁵ Նրանք երկուսով պիտի գրի առնեին սրբուհու վերջին խոսքերը:

Ուրեմն կարելի է ամփոփել, որ Ղ. Ալիշանի մոտեցումը, մեր կարծիքով եղել է ճիշտ ու Ազաթանգեղոսի կամ Ջ. Գլակի հիշատակած Սյունյաց իշխանը թերևս եղել է նույն՝ վրաց տարեգրության մեջ հիշատակվող Պերոզավր Սյունեցի իշխանը: Մեծ հեղինակություն վայելող, նաև գրագետ իշխանը գործուղվել է Վրաստան՝ գրի առնելու մահվան շեմին գտնվող Սբ. Նինայի վերջին խոսքերը:

VI-րդ դարի բյուզանդական պատմիչ Պետրոս Պատրիկիոսը հիշատակում է III դարավերջին ապրած Սյունյաց իշխան Վարազշապուհի անունը, որին պարսից Ներսես թագավորը՝ Գիոկլետիանոս կայսեր գորավար Գալերիոսի 297թ. հաղթությունից հետո, պարսիկների կողմից որպես պատվիրակության անդամ ուղարկվել էր կնքելու Մծբինի 40-ամյա խաղաղության դաշնագիրը:¹⁶ Հայ պատմիչները ընդհանրապես չեն հիշատակել այս հայ իշխանի մասին: Ի՞նչ կապ կարող էր լինել այդ երկու սիսական իշխանների միջև: Անշուշտ, պարսկական արքունիքում ապրող Վարազշապուհը Ազաթանգեղոսի կամ Ջ. Գլակի հիշատակած իշխանը լինել չէր կարող, բայց նա ի՞նչ ազգակցական կապ ուներ Պերոզավր Սյունեցու հետ, միայն գուշակել կարելի է: Ալիշանն Սյունյաց իշխանացանկում նրանց հիշատակում է իրար ետևից՝ նախ Վարազշապուհին, ապա Պերոզավրին: Պետք է կարծել, որ նրանք եղել են հակոտնյա սյունյաց իշխաններ:¹⁷

Պերոզավր Սյունեցուց հետո IV դարի հայոց պատմության թատերաբեմում մենք տեսնում ենք մեկ ուրիշ երևելի սյունյաց իշխանի՝ Անդոկ անունով:¹⁸

Ծանոթություններ և հղումներ

¹ Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 10:

²**Ագաթանգեղոս**, Պատմություն հայոց, աշխարհաբար թարգմանություն ներածականով ու ծանոթություններով Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1977, էջ 126:

³ **Ագաթանգեղոս**, նշվ. աշխ., էջ 149:

⁴ **Մամիկոնյան Հ.**, Տարոնի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 1989թ., էջ 40:

⁵ Նշվ. աշխ., էջ 57:

⁶ **Օրբելյան Ստ.**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 75:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ **Օրբելյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 76:

¹⁰ Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 10, 523: Ալիշանը «Սիսականում» Սյունյաց իշխանի անունն օգտագործում է երեք անգամ՝ մեկ դեպքում անունը գրելով Պելուծավր (էջ 10), երկու դեպքում՝ Պելուծավր (էջ 17, 523): Ամեն դեպքում Ալիշանը համոզված էր, որ իշխանի անունը սխալ (խանգարեալ) է գրված:

¹¹ **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Ա (Ե-ԺԲ դար), Յերեվան, 1934, էջ 22:

¹² Նշվ. աշխ., էջ 174:

¹³ Հր. Աճառյանը պերոզ-ը համարում է փոխառեալ հունարենից, որը նշանակում է «շղարշ, վզի վարշամակ» և կամ «գոտի, մանավանդ՝ պարկեշտության գոտի»: (տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերենի արմատական բառարան, հ.4, Երևան, 1979, էջ 76): Իսկ Խորենացին պերոզ-ը մեկնաբանում է որպես «հաղթող» (տե՛ս **Խորենացի Մ.**, Հայոց պատմություն, գիրք II, գլ. ԿԳ, Երևան, 1981, էջ 209): Ջավրը նույնպես հունարեն է, նշանակում է մողես: Պերոզ բառը և՛ որպես հատուկ անուն, և՛ որպես հասարակ անուն օգտագործել են ուրիշ հայ պատմիչներ և՛ Սեբեոսի մոտ հանդիպում է «զարն պերոզական» արտահայտությունը, որը ուսումնասիրողները (Ք. Պատկանյանը, Ստ. Մալխասյանը) թարգմանում են հաղթական գունդ (տե՛ս Պատմութիւն Սեբեոսի, աշխ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 96, 257): Ամեն դեպքում սյունեցի այդ իշխանի անունը ոչ հայերեն, փոխառյալ անուն է, գուցե և պատվանուն:

¹⁴ Տե՛ս Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Երևան, 2002, էջ 814:

¹⁵ Սալոմեն եղել է վրաց առաջին քրիստոնյա թագավոր Սիհրանի և թագուհի Նինայի հարսը, նրանց որդի Ռևի կինը՝ հայոց Տրդատ III Մեծ արքայի աղջիկը (տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., էջ 174): Իսկ որ Սք. Նինան ուսանել ու գիտեր հայերեն, հանրահայտ է:

¹⁶ Տե՛ս **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 120: Ղ. Ալիշանը ստուգաբանել է Սյունյաց իշխանի անվան տարրնթերցումները, հաստատել Վարազշապուհ (Վարազ-Շապուհ) անվանումը, որը և միանշանակ ընդունվել է Մանանդյանի կողմից (տե՛ս **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., յալեւում, էջ 523):

¹⁷ Իրար հակադիր սյունյաց մերձավոր ազգական իշխանների հաճախ ենք հանդիպում Սյունիքի պատմության ընթացքում: Միայն V դարում եղել են Վասակ և Վաղինակ, Վասակ և Վարազվաղան, Գղիհոն և Բարիկ, Գղիհոն և Հազդ սյունյաց հակոտնյա իշխաններ:

¹⁸ Պատմիչները նրա անունը գրում են նաև Անդրովկ, իսկ Խորենացին թերևս ճշգրիտ՝ Անտիոք ձևով (տե՛ս **Խորենացի Մ.**, նշվ. աշխ., գ. III, գլ. ԻԳ, էջ 262):

1. **Ագաթանգեղոս**, Պատմություն հայոց, աշխարհաբար թարգմանություն ներածականով ու ծանոթություններով Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1977:
2. **Ալիշան Գ.**, Սիսական, Վենետիկ, 1893:
3. **Հր. Աճառյան**, Հայերենի արմատական բառարան, հ.4, Երևան, 1979:
4. **Խորենացի Մ.**, Հայոց պատմություն, գիրք II, գլ. ԿԳ, Երևան, 1981:
5. **Մամիկոնյան Հ.**, Տարոնի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 1989թ.:
6. **Մանանդյան Հ.**, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Բ, մաս Ա, Երևան, 1957:
7. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Ա (Ե-ԺԲ դար), Յերեվան, 1934:
8. Պատմութիւն Սեբեոսի, աշխ. Գ. Արգարյանի, Երևան, 1979:
9. Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Երևան, 2002:
10. **Օրբելյան Ստ.**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները Ա. Արրահամյանի, Երևան, 1986:

РЕЗЮМЕ

Вокруг вопроса о личности упомянутого в грузинской летописи

Перозавра Сюнеци.

Сергей Ахвердян

Армянские историки (Агафангел, Зеноб Глак) дав подробное описание распространение христианства в Армении, отмечают в этом деле значительную роль сюникского князя, но не упоминают его имени. Г. Алишан в грузинской летописи, касающейся событий этих времен, встретив имя Перозавр (Пелужавр) Сюнеци, выразил мнение, что это мог быть упомянутый сюникский князь, о котором говорили армянские историки.

Автор статьи разделяет точку зрения Алишана, одновременно, по двум грузинским летописным источником (Безымянный, Леонти Мровели) уточняет имя сюникского князя. Согласно грузинским летописцам князь Перозавр Сюникский записал предсмертные слова основателя грузинской христианской церкви Св. Нины.

SUMMARY

About the question of identity of Petrosavur from Syunik noticed in the Georgian Chronology.

Sergey Hakhverdyan

Agatangehius and Zenob Glak, two Armenian historians have described in details the spread of Christianity in Armenia. They mention the remarkable role of the prince of Syunik in this event but they don't give his name. Ghevond Alishan has come across the name Perozavrus (Pelujavr) Syunetsi in the Georgian annals of that time and his opinion is that this might have been the above-mentioned Armenian prince.

The author of the article shares Alishan's opinion. Additionally, based on 2 Georgian historians (Unnamed, IX century, and Leonti Mroveli, XI century) he has pinpointed more precisely the name of the prince of Syunik. According to the Georgian historians Prince Perozavrus of Syunik recorded the last words of the founder of the Georgian Christian church St. Nino.